Մրցույթ՝ «Երևանի հ. 134 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ), «Մաթեմատիկա» (18 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (18 դասաժամ), «Ֆրանսերեն» (5 դասաժամ), «Հայոց պատմություն» (2 դասաժամ), «ԹԳՀԳ» (10 դասաժամ), «ՀԵՊ» (2 դասաժամ), «Իմ հայրենիքը» (4 դասաժամ), «Իմ հայրենիքը և աշխարհը» (4 դասաժամ), « Համաշխարհային պատմություն» (1 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2024թ. սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 18**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. սեպտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին**, Երևանի հ. 134 հիմնական դպրոցում: Հասցե՝ ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված, Նանսենի 14: Տեղեկությունների համար զանգահարել (010) 63-48-00 հեռախոսահամարով: